ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2026 թվականի N 1154 - Ա

ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՖՈՒՏԲՈԼ ՄԱՐԶԱՁԵՎԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 450-Ն որոշման հավելվածի 5-րդ և 6-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2026 թվականի ամառային զորակոչից մինչև 2028 թվականի ամառային զորակոչը տարկետում տալ սպորտի բնագավառում ֆուտբոլ մարզաձևից նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացիների՝ համաձայն հավելվածի:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2026 թվականի ամառային զորակոչից սկսած մինչև 26 տարին լրանալը տարկետում տալ Կարեն Արամայիսի Նալբանդյանին (ծնված՝ 2002 թվականի ապրիլի 14-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Հալաբյան փ., շ. 7, բն. 60, Երևանի N 1 ԶԿ)՝

ֆուտբոլի Հայաստանի Հանրապետության ազգային հավաքականի անդամ (նախորդ տարկետումը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1104-Ա որոշմամբ՝ մինչև 2026 թվականի ամառային զորակոչը):

3. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2026 թվականի ամառային զորակոչից սկսած մինչև 21 տարին լրանալը տարկետում տալ Ալյոշա Վազգենի Խաչատրյանին (ծնված՝ 2006 թվականի մայիսի 13-ին, հաշվառման հասցեն՝ ՀՀ, Արարատի մարզ, Բաղրամյան, Մաշտոցի փ., տ. 48, Արարատի մարզի ԶԿ)՝ ֆուտբոլի Հայաստանի Հանրապետության մինչև 21 տարեկանների ազգային հավաքականի անդամ (նախորդ տարկետումը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1104-Ա որոշմամբ՝ մինչև 2026 թվականի ամառային զորակոչը):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

06.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ